# ԱՆԳԼԵՐԵՆԻ
# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
# 2 ժամ

# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
# ԱՆԳԼԵՐԵՆ
# ԵՐՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ
**(շաբաթական 2 ժամ, տարեկան 68 ժամ)**

## 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

### *Նախաայբբենական շրջան (12 ժամ)*

Երրորդ օտար լեզվի ուսուցումը սկսվում է նախապատրաստական շրջանով, որին հատկացվում է 12 ժամ: Նախապատրաստական կամ նախաայբբենական շրջանը կառուցվում է բանավոր խոսքի հիման վրա: Այս փուլի հիմնական նպատակը տարրական հաղորդակցական կարողություններ ձևավորելն է: Այդ տարիքի երեխաներն արդեն ունեն որոշակի հաղորդակցական կարողություններ, որոնք թույլ են տալիս շփվել միմյանց հետ օտար լեզվով: Սա նպաստավոր գործոն է օտար լեզվով հաղորդակցական կարողություններ ձևավորելու համար:

Բանավոր դասընթացը կարող է ուղեկցվել այբուբենի տառերի պատկերների ծանոթացմամբ: Նախապատրաստական շրջանի դասընթացը կարելի է կազմակերպել հետևյալ թեմաների շուրջ. «Ես», «Ինձ շրջապատող մարդիկ», «Ինձ շրջապատող առարկաները», «Ընտանի և վայրի կենդանիներ», «Դպրոց» և այլն:

Այս նպատակով խորհուրդ է տրվում օգտագործել ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված “English A”, դասագիրքը, բանավոր խոսքի զարգացմանը նպաստող պաստառները և համապատասխան տեսալսողական միջոցներ:

Ողջ լեզվական նյութը, քերականությունը, որը մատուցվում է բանավոր, ներմուծվում է ինտեգրված ձևով՝ ամենագործածական խոսքային նմուշների միջոցով:

| Ուսուցանվող նյութ | Ուսուցման/ուսումնառության նպատակները | Ուսումնական գործունեության տեսակները |
|---|---|---|
| ***Թեմաներ***<br>**Ես և իմ շրջապատը 6 ժամ**<br>- Իմ մասին. անուն, տարիք, հասցե<br>- Ես և իմ ընտանիքը, ծնող, քույր, եղբայր<br>- Իմ իրերը և շրջապատող առարկաները | | |
| **Դպրոց 6 ժամ**<br>- Իմ դպրոցը և դասարանը<br>- Գրենական պիտույքներ | | |
| **Իմ նախասիրությունները 4 ժամ**<br>**-** Ինչ եմ սիրում և ինչ չեմ սիրում<br>- Ընտանի և վայրի կենդանիներ | | |
| **Մարմնի մասեր 4 ժամ**<br>Արտաքին տեսքի պարզ նկարագրություն<br>Հագուստ և գույներ | | |
| **Տարվա եղանակներ 5 ժամ**<br>ամիսներ, շաբաթվա օրեր | | |
| **Տոներ.** իմ ծննդյան օրը **5 ժամ** | | |
| **Սնունդ. նախաճաշ, ճաշ, ընթրիք 7 ժամ**<br>Գնումներ | | |

| | | |
|---|---|---|
| **Իմ բնակավայրը, քաղաքը, գյուղը, բանկարանը, սենյակը 6 ժամ**<br>Հեքիաթներ, պատմություններ /ադապտացված/, երգեր **7 ժամ**<br>**Կրկնություն 6 ժամ** | | |

| Ուսուցանվող նյութ | Ուսուցման/ուսումնառության նպատակները | Ուսումնական գործունեության տեսակները |
|---|---|---|
| **Հնչյուններ, հնչյունակապակցություններ**<br>**Բառեր, բառակապակցություններ**<br>**Խոսքային նմուշներ**<br>**Պարզ և կարճ տեքստեր՝ լսելու և խոսելու համար**<br>**Հանգավորումներ**<br>**Բանաստեղծություններ**<br><br>***Նկարազարդ տեքստեր*** | - Օտար լեզու (անգլերեն) սովորելու համար **դրդապատճառների ստեղծում**<br>- Օտար լեզվի (անգլերեն) և լեզվակիր երկրի (Մեծ Բրիտանիա և ԱՄՆ) մասին **նախնական տեղեկությունների հաղորդում**<br>- Անգլերեն բանավոր խոսքի **տարրական հմտությունների ձևավորում** (ունկնդրել, խոսել)՝ տրված թեմաների շուրջ երկխոսություններ վարելու, իր, ընկերների, ծնողների մասին ոչ ծավալուն տեղեկություններ հաղորդելու նպատակով: | ▪ **դերախաղեր**<br>▪ **խաղեր երկխոսություններ**<br>▪ **զրույցներ** |

| | | |
|---|---|---|
| ***Արփասանություն (ուղղախոսություն)***<br><br>Անգլերենի հնչյունային համակարգը.<br>- ձայնավոր և բաղաձայն հնչյուններ.<br>- երկար և կարճ ձայնավորներ<br>Վանկ և բառաշեշտ<br>Նախադասության հնչերանգը (պատմողական, հարցական, հրամայական, բացականչական)<br>Անգլերենի այբուբենը, տառեր, տառակապակցություններ<br>Ուղղագրության, ուղղախոսության և ընթերցանության կանոններ | **Ձևավորել ընկալողական-արտասանական հմտություններ և ճիշտ հնչերանգի պահպանման կարողություններ**<br><br>Կարողանալ ճանաչել և վերարտադրել<br>- ձայնավոր և բաղաձայն հնչյուններն ու հնչյունակապակցությունները<br>- ձայնավորը՝ որպես վանկարար հնչյուն.<br>կարճ-երկար ձայնավորները, որպես իմաստատարբերակիչ արժեք ունեցող գործոն<br><br>Կարողանալ հարաբերակցել հնչյունները և տառերը, տառամիասնությունները և դրանց արտասանությունը, տարբերակել ձայնավոր և բաղաձայն հնչյունները, կարճ և երկար ձայնավորները, երկբարբառները, վանկային կապակցությունները՝ ամբողջական բառ ձևավորելու նպատակով:<br><br>Կարողանալ հարաբերակցել բառի գրաֆիկական և հնչյունային պատկերները:<br><br>Կարողանալ տրոհել բառերը վանկերի, վանկերը՝ հնչյունների<br>Կարողանալ ճիշտ շեշտադրել բառերը<br>Կարողանալ ճիշտ ընկալել և խոսելիս պահպանել նախադասության տրամաբանական շեշտը<br>Կարողանալ ճիշտ հնչերանգով արտասանել տարբեր տիպի (պատմողա- | <br><br><br>- Ձայնային վարժություններ. լսել ձայնագրություններ և փորձել վերարտադրել, հնչյունները, վանկերը, բառերը արտասանել տարբեր աստիճանի բարձրության ձայնով, տարբեր արագությամբ, դանդաղ, ծոր տալով, ընդհատումներով, դադարներով և այլն,<br>ճիշտ շեշտադրել բառերը, բառակապակցությունները:<br>- Հանգավորումներ<br>- Երգեր<br>- Համապատասխանեցում. տառերի և այդ տառով սկսվող առարկայի, կենդանու, բույսի և այլ նկարների համապատասխանեցում և այլն:<br>- Գրավոր առաջադրանքներ. տեղադրման վարժություններ<br>- Թելադրություն |

| | | |
|---|---|---|
| | կան, հարցական, հրամայական և բացականչական) նախադասությունները<br>Կարողանալ ձևավորել և զարգացնել ընթերցանության և գրելու տեխնիկան | |
| ***Բառապաշար*** | | |
| **Բառապաշարը՝**<br>մոտ **300 բառ**, հիմնականում՝<br>**վերատադրողական (ակտիվ)** բառապաշար խոսելու և գրելու համար, այդ թվում՝<br>- բառակապակցություններ,<br>- դարձվածքներ,<br>- խոսքային նմուշներ,<br>- ռեպլիկներ | **Ընդլայնել վերատադրողական և ընկալողական (պրոդուկտիվ և ռեցեպտիվ) բառապաշարը՝** նոր բառերի, բառակապակցությունների միջոցով:<br>**Կարողանալ**<br>**- գործածել** նոր յուրացրած բառապաշարը՝ խոսելիս և գրելիս, մտքերը արտահայտելու նպատակով.<br>- **ընկալել և հասկանալ** բառերն ու բառակապակցությունները ունկնդրելիս և ընթերցելիս՝ տեղեկատվությունը ստանալու նպատակով: | ▪ «Բառաքարտեզ»<br>(Word association). Էջի (կամ գրատախտակի) կենտրոնում գրում են տրված բառը, շուրջը՝ իմաստով դրան զուգորդվող իրենց հայտնի բառերը:<br>▪ Բազմընտրանքային առաջադրանքներ (Multiple choice)<br>▪ Տրված բառաշարքում գտնել.<br>- իմաստով մյուսներին չհամապատասխանող բառը,,<br>- իմաստային բառազույգերը,<br>▪ Համադրում (Matching)<br>Աշակերտները համադրում են տրված երկու բառաշարքերը:<br>- Լրացում.<br>լրացնել կամ փոխարինել բառը տրված բառաշարքում կամ տեքստում:<br>Նշել նկարներին համապատասխանող բառերը,<br>նշել նկարներին հականիշ կամ հոմանիշ բառերը:<br><br>- Բառախաղեր<br>- Մնջախաղ. Գտի՛ր բառը |
| ***Բառակազմություն*** | | |
| **ա/** *ածանցում.*<br>-ly /quickly/, -y /sunny/ | Կարողանալ գործողություն արտահայտող բառից կազմել նոր բառեր՝ այդ գործողությունը արտահայտող անձը | - Համեմատություն<br>- Խճանկար<br>- Բառադարան |

| | | |
|---|---|---|
| **բ/** բառաբարդում.<br>գոյական + գոյական /postcard, blackboard/<br><br><br><br>+ փոխակարգում. /conversion/<br>/to work- work/ | անվանելու նպատակով (օր.՝ teach – teach**er)**<br>Կարողանալ կազմել դասական թվական-ներ (օր.՝ the fif**th**)<br>Կարողանալ կռահել բարդ բառի իմաստը բաղադրիչ մասերից (օր.՝ basketball)<br>Կարողանալ ճանաչել և կազմել բայերից գոյականներ և ճիշտ գործածել դրանք:<br>Օր.՝ He works at the office.<br>His work is interesting. | - Գրավոր առաջադրանքներ<br>- Խմբավորում՝ տրված նկարները խմբավորել ըստ որոշակի սկզբունքի:<br>- Համապատասխանեցում<br>Կիրառել պաստառներ բառակազմության վերաբերյալ |

| ***Քերականություն*** | | |
|---|---|---|
| ***Հոդ (the Article)***<br><br>անորոշ (a/an)<br>որոշյալ (the) | Կարողանալ ճիշտ օգտագործել հոդը ցույց տալով. ա) առարկայի նման առարկաների որևէ խմբին կամ դասին պատկանելը (It is **a** table/ **an** apple), բ) խոսողին և լսողին հայտնի առարկայի մասին խոսելիս (Where is **the** pen?) | - Անհատական, զույգերով, մեծ ու փոքր խմբերով աշխատանք<br>- Խաղ «Ճանաչում եմ - չեմ ճանաչում»<br>- Կազմել աղյուսակներ՝ ըստ հոդերի |

| | | |
|---|---|---|
| ***Գոյական (the Noun)*** | | |
| **Թիվ (Number)** - եզակի/ հոգնակի.<br>կանոնավոր /-s, -es/ և անկանոն ձևերը /man, woman, child, tooth, foot/<br><br>**Հատուկ/հասարակ (common/proper)** | Կարողանալ կազմել և ճիշտ օգտագործել գոյականի եզակի և հոգնակի ձևերը մեկ կամ մեկից ավելի առարկա կամ անձ արտահայտելու համար (օր.՝ boy - boys; class - classes, bench – benches, dish – dishes, box – boxes; man – men, tooth-teeth)<br><br>Կարողանալ տարբերակել և ճիշտ գրել հատուկ և հասարակ գոյականները | - Հակադրում.<br>տրված բառերը, նկարները դասավորել երկու շարքով՝ եզակի, հոգնակի<br>- Բառադարան |
| ***Գոյական (the Noun)***<br><br>Թիվ - եզակի/ հոգնակի<br>կանոնավոր /-s, -es/ և<br>անկանոն ձևերը /goose, mouse/<br><br>հաշվելի / անհաշվելի<br><br>**Հոլով**<br><br>ստացական (եզակի/ հոգնակի ձևերը );<br>of-phrase | Կարողանալ կազմել և ճիշտ օգտագործել գոյականի եզակի և հոգնակի ձևերը մեկ կամ մեկից ավելի առարկա կամ անձ արտահայտելու համար:<br><br>Կարողանալ տարբերակել հաշվելի առարկայական գոյականները նյութ ցույց տվող անհաշվելի գոյականներից:<br><br>Օր.՝ I see colourful books on the bookshelf.<br>I don't like to drink milk in the morning.<br><br>Կարողանալ արտահայտել պատկանելիությունը ստացական հոլովի և նրան համարժեք of-phrase-ի միջոցով:<br>Օր.՝ My uncle's country house is in Hankavan.<br>The country house of my uncle is in Hankavan. | - Նախադասություններ լրացնել և կազմել՝ կիրառելով գոյականի ստացական հոլովը:<br><br>Կոլեկտիվ պատմություններ.<br>երեխաները խմբով պատմություններ են հորինում որևէ թեմայով, որոնք խթանում են ստացական հոլովի կիրառումը:<br>- Փոխակերպել նախադասությունները of-phrase-ի օգնությամբ |

| | | |
|---|---|---|
| ***Ածական (the Adjective)*** | | |
| Գույն, չափ, ձև, որակ ցույց տվող ածականների համեմատության աստիճանները /կանոնավոր և անկանոն ձևերը (good, bad, many/much, little)/ | Կարողանալ արտահայտել անձերի, իրերի, առարկաների էական հատկանիշները:<br>Օր.՝ The sky is blue.<br>It is a large and clean classroom.<br><br>Կարողանալ արտահայտել իրերի, առարկաների էական հատկանիշները<br><br>Կարողանալ համեմատել և համադրել առարկաները՝ որոշելով դրանց նմանությունները և տարբերությունները<br><br>Օր.՝ Never say that you are strong, you can see a stronger one; My handwriting is good, my sister's handwriting is better. Lucy's handwriting is the best in the group. | - Համադրում.<br>համադրել տրված գոյականները (կամ նկարները) և դրանց համապատասխանող հատկանիշները (ածականները):<br>- Տարբերակում.<br>բառաշարքում գտնել և առանձնացնել գույն, չափ, ձև, որակ արտահայտող ածականները:<br>-Նկարագրություն. նկարագրել առաջարկվող առարկաները, իրերը կամ մարդկանց՝ նշելով էական հատկանիշները:<br><br>- Տարբերակում (Find the differences). համեմատել իրերը կամ մարդկանց, գտնել էական հատկանիշները՝ նշելով տարբերությունները |

| Դերանուն (the Pronoun) | | |
|---|---|---|
| Անձնական (I – me, etc.)<br>Ստացական (my,  mine, our, etc.)<br>Ցուցական (this/these; that/those)<br><br><br><br><br><br><br><br><br>Անորոշ (some/any) | Կարողանալ ճիշտ օգտագործել անձնական դերանունները խոսողին, խոսակցին և երրորդ անձին մատնանշելու համար<br><br>Կարողանալ ճիշտ օգտագործել ստացական դերանունները առարկաների պատկանելիությունը արտահայտելու համար<br><br>Կարողանալ ճիշտ օգտագործել ցուցական դերանունները համապատասխանաբար մոտիկ և հեռու գտնվող առարկաներ մատնանշելու համար<br>Կարողանալ ճիշտ օգտագործել  անորոշ դերանունները հաստատական, հարցական և ժխտական նախադասություններում | - Հարցազրույց-երկխոսություն.<br>Երեխաները զույգերով խոսում են որևէ առարկայի կամ անձի մասին՝ աշխատելով փոխարինել գոյականները դերանուններով:<br>- Տարրական զրույց վարել՝ տեղեկություններ տալով իր մասին (ով է, որտեղ է ապրում, քանի տարեկան է և այլն):<br>Յուրաքանչյուրն ասում է, թե ինչ ունի պայուսակում («Սա իմ գիրքն է, իմ գրիչը» և այլն):<br>- Գրավոր առաջադրանքներ.  լ րացնել բաց թողնված դերանունները,  գոյականները կամ հոդերը փոխարինել դերանուններով: |

| | | |
|---|---|---|
| ***Թվական (Numerals)*** | | |
| քանակական /1-100/<br><br>դասական /1-20/ | Կարողանալ հաշվել առարկաները և արտահայտել դրանց քանակը<br><br>Կարողանալ արտահայտել իրադարձությունների/ երևույթների թվային դասակարգումը/ հերթականությունը | - «Հաշվիր». աշակերտները հաշվում և նախադասություններ են կազմում (Օր.՝ «Քանի՞ աշակերտ կա դասարանում, քանի՞ տղա, քանի՞ աղջիկ, քանի՞ նստարան, քանի՞ ծաղիկ, քանի՞ գիրք» և այլն):<br>-Կիրառել պաստառներ թվականների վերաբերյալ |
| ***Բայ (the Verb)*** | | |
| Կանոնավոր և անկանոն բայեր /քանակը 10-15/ to be, to do, to have ներկա և անցյալ ժամանակաձևերով | Կարողանալ օգտագործել to be, to do բայերը որպես իմաստային և օժանդակ բայեր:<br>Օր.՝ I am a student. // I am writing a letter. I do my lessons every day.// Do you speak English?<br><br>Կարողանալ օգտագործել to have բայը «ունենալ» իմաստով:<br>Օր.՝ I have two sisters. | Լրացնել նախադասությունները |

| | | |
|---|---|---|
| **Ժամանակաձներ՝**<br><br>**Ներկա անորոշ (Present Indefinite)**<br>/հաստատական, ժխտական և հարցական ձևերը/ | Կարողանալ ճիշտ օգտագործել ներկա անորոշ ժամանակաձևը առօրյա, սովորական, կրկնվող գործողություն արտահայտելու համար:<br><br>Օր.՝ Every Sunday I visit my grandparents. | - Աշխատանք նկարներով<br><br>- Կոլեկտիվ դիմանկար. աշակերտները նկարագրում են իրենց դասարանը (ովքեր են սովորում, ինչ են սիրում անել և այլն):<br>- Համադրում. համադրել նկարը և համապատասխան բայը<br>- Գրավոր առաջադրանքներ. լրացնել նախադասությունները փակագծերում տրված բայերով<br>Կիրառել պաստառներ, որոնցում ներկայացված են իրադրային օրինակներ: |
| **Ներկա շարունակական (Present Continuous)**<br>/հաստատական, ժխտական և հարցական ձևերը/<br><br><br><br><br>**Անցյալ անորոշ (Past Indefinite)**<br>հաստատական, ժխտական և հարցական ձևերը | Կարողանալ ճիշտ օգտագործել ներկա շարունակական ժամանակաձևը խոսելու պահին ընթացքի մեջ գտնվող գործողություն արտահայտելու համար:<br>Օր.՝ Look, she is playing football with the boys.<br><br><br>Կարողանալ ճիշտ օգտագործել անցյալ անորոշ ժամանակաձևը անցյալում կատարված ավարտված գործողություն արտահայտելու համար<br>Օր.՝ She went to bed early last night. | - Դերային խաղ.<br>Հեռախոսային զրույց. *«Բարև, ի՞նչ ես անում հիմա»:*<br>Յուրաքանչյուրը բացում է նկարը և ասում, թե նկարում ինչ են անում:<br>Կիրառել պաստառներ, որոնցում ներկայացված են իրադրային օրինակներ:<br><br>- Երկխոսություններ<br>- Գրավոր առաջադրանքներ<br>- Լրացնել նախադասությունները՝ փակագծերում տրված բայերը դնելով համապատասխան |

| | | |
|---|---|---|
| ***Եղանակավորող /մոդալ/ բայեր (Modal Verbs)***<br>can /կարողություն/<br>դրա հաստատական, ժխտական և հարցական ձևերը | Կարողանալ օգտագործել մոդալ բայը կարողություն արտահայտելու նպատակով<br><br>Օր.՝ I can't speak English well. | - Տարրական զրույց վարել.<br>«Ի՞նչ եմ ուզում և ի՞նչ չեմ ուզում անել»:<br>«Ի՞նչ կարող եմ և ի՞նչ չեմ կարող անել»,<br>և այլն: |
| **Բայի հրամայական եղանակ (Imperative Mood)** | Կարողանալ հասկանալ ու կատարել ուսուցչի հրահանգները<br>Կարողանալ արտահայտել խնդրանք, կար-գադրություն, հրահանգ<br>Կարողանալ քաղաքավարի դիմել ինչ-որ մեկին, ինչ-որ բան հարցնել կամ խնդրել:<br>Օր.՝ Please, read the text. | - «Ցուցանակներ». մտածել և գրել հրահանգող կամ արգելող ցուցանակներ՝ դպրոցի կամ իր սենյակի համար (Օր.՝ «Բարձր մի խոսեք», «Զանգից հետո ժամա-նակին մտեք դասարան», «Խաղալիքներս, տետրերս չվերցնեք» և այլն): |

| | | |
|---|---|---|
| **Մակբայ (the Adverb)**<br>տեղի /here, there, near, far/, ժամանակի /now, then, yesterday, today/,<br>ձևի /slowly, quickly, well, badly/,<br>հաճախականության /usually, always, often/, չափի /very/ | Կարողանալ արտահայտել իրադարձու-թյունների, գործողությունների տեղը և ժամանակը, ձևը, հաճախականությունը: | - Հարցազրույց-երկխոսություն. երեխաները զույգերով խոսում են այն մասին, թե ինչ են անելու այդ օրը:<br>- Գրավոր առաջադրանքներ. լրացնել բաց թողնված մակբայները: |
| **Նախդիր (Prepositions)**<br>տեղի / in, on, to, at, under, behind, in front of/<br>ժամանակի /in, at, on, during/ | Կարողանալ օգտագործել նախդիրները<br>տեղ (in the room, on the table, under the chair), ուղղություն (to the cinema) և ժամանակ (in the morning, at 2 o'clock, on Sunday) արտահայտելու համար | - Տեղադրում. աղյուսակներում տրված գոյականների համար տեղադրել համապատասխան նախդիրներ, որոնք ցույց կտան տեղ, ուղղություն կամ ժամանակ, աղյուսակի սյուները ներկել համապատասխան գույներով: |
| **Շաղկապ (Conjunction)**<br><br>And, but, or, because<br>that, when | Կարողանալ բառակապակցություններով և նախադասություններով արտահայտված մտքերը կապակցել կամ հակադրել<br><br>Օր.՝ I like to sing and dance with my friends.<br>I go to school, and my younger brother goes to a nursery school. | - Համադրում. տրված պարզ նախադա-սությունները, բառակապակցությունները, բառերը միացնել նախադասության իմաստին կամ հաղորդակցական նպատակին համապատասխան շաղկապներով: |

| **Շարահյուսություն** | | |
|---|---|---|
| **Նախադասություն**<br>**Նախադասության մեջ ենթակայի և ստորոգյալի համաձայնեցում**<br><br>**Նախադասության շարադասություն** /Word order/<br>**Հաստատական նախադասություններ** /*պարզ համառոտ, պարզ ընդարձակ*/<br><br>**Հարցական նախադասություններ** /*ընհանուր, հատուկ* (what, who, where, when, how, how many/much, why)<br><br>ներկա անորոշ, ներկա շարունակական ժամանակաձևերով<br><br>**Հրամայական նախադասություններ**<br>/հրահանգ և խնդրանք/<br><br>**Անդեմ նախադասություններ**<br>ներկա Ժամանակաձևով (It is ... . )<br><br>անցյալ Ժամանակաձևով<br>(It **was** cold; ... )<br><br>There is /There are **կառույցներով նախադասություններ** | Կարողանալ ճիշտ կազմել տարբեր տիպի /հաստատական, հարցական, հրամայական/ նախադասություններ և օգտագործել դրանք որևէ բան հաստատելու, հարցնելու կամ ցուցում/ հրահանգ տալու համար, ինչպես նաև մարդկանց, վայրերը և այլն բնութագրելու համար:<br>Օր.՝ We travel from Yerevan to Goris by bus.<br>Where are you going?<br>Open your books at Page 10, please.<br><br>Կարողանալ կազմել և գործածել անդեմ նախադասություններ<br>(Օր.՝ It is cold/warm. )<br><br>Կարողանալ կազմել և գործածել *There is/ There are* կառույցներով նախադասություններ<br>Կարողանալ ճիշտ օգտագործել անդեմ նախադասությունները ներկա և անցյալ Ժամանակաձևով:<br><br>Օր.՝ It is/ was very cold yesterday.<br>Օր.՝ There is a rich library in our school. | - Տեղադրում<br>- Լրացում<br>- Երկխոսություններ<br>- Հարցուպատասխան<br>- Գրավոր առաջադրանքներ<br><br>- «Եղանակի տեսություն». աշակերտներին առաջարկվում է կազմել եղանակի տեսություն տվյալ օրվա կամ տարվա այս կամ այն եղանակի համար:<br><br>- «Բառերի աղցան» տրված խառը դասավորությամբ բառերից կառուցել տարբեր տիպի նախադասություններ: |

| *Տեքստերի տիպերը* | | |
|---|---|---|
| ***1. Տեքստեր՝ ունկնդրելու և խոսելու համար*** | **Զարգացնել ունկնդրելու և խոսելու հետևյալ կարողությունները.** | |
| ▪ կարճ նկարագրություններ<br>▪ կարճ տեղեկատվական տեքստեր<br>▪ մանկական երգեր, բանաստեղծություններ,<br>▪ պարզեցված (ադապտացված) հատվածներ հեքիաթներից, պատմություններից<br>▪ կարճ երկխոսություններ<br>▪ ձայնագրություններ, տեսաֆիլմեր<br>▪ շուտասելուկներ<br>▪ ասացվածքներ<br>▪ հանգավորումներ /Nursery Rhymes/,<br>▪ պատրաստի խոսքային նմուշներ, ռեպլիկներ | Կարողանալ լսելով հասկանալ ծանոթ լեզվական նյութի հիման վրա կազմված կարճ և ոչ բարդ տեքստի հիմնական բովանդակությունը.<br>Կարողանալ լսելով հասկանալ ուսուցչի խոսքը դասարանում. պարզ հրահանգները և կատարել դրանք<br>Կարողանալ կռահել որոշ անծանոթ բառերի նշանակությունը մայրենի կամ արդեն իմացած այլ լեզվի բառերի հետ նույն ինչողության, ծանոթ բառարմատի կամ համատեքստի հիման վրա.<br>Կարողանալ հաղորդակցման հիմնական ոլորտների շրջանակում տարրական զրույց վարել՝ կիրառելով բարեկիրթ խոսքի հիմնական կանոնները և իրեն հայտնի խոսքային նմուշները.<br>Կարողանալ ընկալել և հասկանալ հեքիաթների, պատմվածքների ընդհանուր բովանդակությունը՝ հիմնվելով նկարի վրա<br>Կարողանալ արտահայտել մտքերը պարզ կապակցված խոսքով /4-5 նախադասություն/<br>Կարողանալ հարցնել և ասել նոր բառերի իմաստը և ուղղագրությունը | - Լսել ձայնագրություններ և վերարտադրել:<br>- Դիտել տեսաֆիլմեր և պատասխանել հարցերին:<br>- Բարձրաձայն ընթերցանություն՝ ուշադրություն դարձնելով բառերի ճիշտ արտասանությանը, շեշտադրմանը, նախադասության հնչերանգին:<br>- Աշխատանք նկարների շուրջ. նկարագրել նկարը. խոսել նկարի բովանդակության մասին:<br>- Դերային խաղ<br>- Զույգերով, մեծ ու փոքր խմբերով աշխատանք. հարցեր կազմել և պատասխանել տրված հարցերին և այլն:<br>- Նկարագրել առարկան, երևույթը՝ պահպանելով որոշակի հաջորդականություն. օրինակ՝ առարկայի անվանումը, հատկանիշը, գործողությունը և այլն: |

| | | |
|---|---|---|
| | Կարողանալ ներկայացնել ուրիշներին<br><br>Կարողանալ շնորհակալություն հայտնել ինչ-որ բանի համար<br><br>Կարողանալ հարցեր տալ /ինչու, ինչպես, որքան/, ինչ-որ բան խնդրել, ինչպես նաև պատասխանել /ընդունել կամ մերժել/, երբ իրենից ինչ-որ բան են խնդրում<br><br>Կարողանալ պարզ տեղեկություններ հայտնել իր մասին, ընտանիքի, ընկերոջ մասին, ինչպես նաև հարցնել անձնական տվյալների մասին /անունը, ազգանունը, տարիքը, հասցեն, զբաղմունքը, նախասիրությունները և այլն/<br><br>Կարողանալ պարզորեն նկարագրել հայկական և լեզվակիր ժողովրդի որոշ տոներ և դրանց հետ կապված որոշ սովորույթներ<br><br>Կարողանալ խոսել անցած կատարված իրադարձությունների, գործողությունների մասին | |

| 2. *Տեքստեր ընթերցելու համար* | **Զարգացնել ընթերցելու հետևյալ կարողությունները.** | |
|---|---|---|
| ▪ մանկական երգեր, բանաստեղծություններ,<br>▪ հանգավորումներ, համրանքներ<br>▪ հանելուկներ,<br>▪ զվարճալի պատմություններ<br>▪ երկխոսություններ<br>▪ նկարագրություններ<br>▪ պարզ տեղեկատվություն<br>▪ ցուցանակներ, ազդագրեր<br>▪ պարզեցված (ադապտացված) հատվածներ հեքիաթներից, պատմություններից | Կարողանալ լուռ ընթերցել՝ առանձնացնելով տեքստում անհրաժեշտ տեղեկությունը<br>Կարողանալ կարդալով ընկալել տեքստի հիմնական բովանդակությունը, գտնել անհրաժեշտ տեղեկությունը | - Բարձրաձայն ընթերցանություն՝ ուշադրություն դարձնելով բառերի ճիշտ արտասանությանը, շեշտադրմանը, նախադասության հնչերանգին:<br>- Բարձրաձայն ընթերցանություն՝ տրված ժամանակամիջոցում<br>- Ընթերցանությունից հետո կազմակերպել զրույց ընթերցածի վերաբերյալ:<br>- Աշխատանք տեքստի հետ. գտնել գլխավոր, էական միտքն արտահայտող նախադասությունները, գնահատել (ճիշտ է/սխալ է, դուր է գալիս/դուր չի գալիս և այլն):<br>- Խճանկար (Jigsaw). վերադասավորել տեքստի խառնված նախադասությունները, վերադասավորել մասնատված տեքստի մասերի տրամաբանական հաջորդականությունը՝ հարցերի կամ նկարների օգնությամբ:<br>- Դերային խաղ<br>- Աշխատանք լեզվական թղթապանակով |

| 3. ***Տեքստեր՝ գրելու համար*** | **Զարգացնել գրելու հետևյալ կարողությունները.** | |
|---|---|---|
| ▪ ինքնակենսագրական պարզ տեղեկություններ<br>▪ կարճ անձնական նամակ<br>▪ համառոտ գրություն ՝ մայրիկին կամ ընկերոջը<br>▪ շնորհավորական բացիկ<br>▪ փոքրիկ հոդված՝ դասարանական թերթի համար | Կարողանալ տեքստից դուրս գրել և տեղադրել բառեր, բառակապակցություններ<br>Կարողանալ գրել պարզ կապակցված տեքստ-շնորհավորանք /Նոր Տարվա կամ ծնդյան օրվա առթիվ/ կամ կարճ անձնական նամակ՝ հիմնվելով օրինակի վրա<br>Կարողանալ պարզ հարցաթերթիկ /տետրի առաջին էջը/ լրացնել անձնական տվյալների մասին | - Կազմել նախադասություններ՝ տրված բառերով<br>- Լրացնել տեքստի բացթողումները<br>- Լրացնել հարցաթերթիկը<br>- Բացիկ/նամակ գրել՝ շնորհավորելով ուսուցչին, դասընկերոջը, ընտանիքի անդամներին որևէ տոնի առթիվ /ձևակերպել նամակը. ընդունված ձևով. հասցեն, նամակի սկիզբը և վերջը/<br>- Մի քանի նախադասությամբ (3-4) կապակցված տեքստ գրել տրված թեմայի շուրջ<br>- Թելադրություն<br>- Աշխատանք լեզվական թղթապանակով |

# 6-րդ դասարան

| Ուսուցանվող նյութը | Ուսանելու նպատակը | Ուսումնական գործունեության տեսակները |
|---|---|---|
| <u>**Թեմաներ**</u><br>**Սովերողը, իր շրջապատը և մարդկային հարաբերություններ 8 ժամ**<br>- ընտանիքը, ընկերները և բարեկամները<br>- պարտականությունները<br>- բնակարանը<br><br>**Դպրոց**<br>- Դպրոցական առօրյա **8 ժամ**<br><br>**Կրկնություն և թեմատիկ գրավոր աշխատանք 4 ժամ**<br>**Իմ նախասիրությունները 6 ժամ**<br>- Իմ սիրած զբաղմունքը<br>**8 ժամ**<br>**Հագուստ**<br>-Գնումներ<br>**Կրկնություն և գրավոր աշխատանքներ 4 ժամ**<br><br>**Տարվա եղանակներ և դպրոցական արձակուրդներ 7 ժամ**<br><br>**Ճանապարհորդություն 7 ժամ**<br>**Կրկնություն և թեմատիկ գրավոր աշխատանք 4 ժամ**<br><br>**Տոներ** | | |

| | | |
|---|---|---|
| մայրիկների օր, սբ. Ծննդյան տոներ, Անկախության օր **8 ժամ**<br><br>**Կրկնություն և գրավոր աշխատանքներ** **4 ժամ** | | |

| *Ուղղախոսություն, ուղղագրություն* | | |
|---|---|---|
| **Անգլերենի հնչյունական համակարգը**<br>**- ձայնավոր և բաղաձայն (ձայնեղ, խուլ) բաղաձայններ, երկար և կարճ ձայնավորներ, ձայնավորները  բաց և փակ վանկերում, տառակապակցություններ**<br><br>**Նոր բառեր, բառակապակցություններ**<br>**Նախադասություններ**<br>**Խոսքային նմուշներ** | - **Զարգացնել** ընթերցանության և գրելու տեխնիկան:<br>**Կարողանալ ծանոթ և նոր յուրացվող բառերում ընկալել, տարբերակել և վերարտադրել**<br>- առանձին հնչյուններն ու հնչյունակապակցությունները, տառակապակցությունները<br>-  իմանալ և  նոր լեզվական նյութը յուրացնելիս կիրառել ուղղագրության, ուղղախոսության և ընթերցանության կանոնները: | ▪ Արտասանական վարժանքներ<br>- երկար և կարճ ձայնավորներ<br>- ձայնավոր և բաղաձայն հնչյունները,<br>▪ Հանգավորումներ<br>▪ Շուտասելուկներ<br>▪ Երգեր<br>▪ Խմբավորում<br>▪ Համապատասխանեցում (Matching)<br>▪ Բազմընտրանքային առաջադրանքներ<br>▪ Զույգերով, մեծ ու փոքր խմբերով աշխատանք<br>- տեքստում լրացնել բացթողումները.<br>- տեղադրման վարժություններ |
| **Նախադասության հնչերանգը**<br>- պատմողական, հարցական, հրամայական, բացականչական նախադասությունների հնչերանգ | **Կարողանալ**<br>**- ճանաչել** և **ճիշտ հնչերանգով արտասանել** նախադասությունները | ▪ **Դերային խաղ**<br>Կազմել կարճ գործնական երկխոսություններ |
| **Բառապաշար** | | |
| **Բառապաշար**<br>- **մոտ 100 նոր բառեր ակտիվ** | **Կարողանալ**<br>- ունկնդրելիս և ընթերցելիս **հասկանալ** բառե- | ▪ **Բառախաղեր.**<br>- **Բառերի խմբավորում**, այդ թվում նաև՝ |

| | | |
|---|---|---|
| **վերատադրողական (պրոդուկտիվ) բառապաշարում** (խոսելու և գրելու համար) | րը, բառակապակցությունները, ռեպլիկները, խոսքային նմուշները, ինչպես նաև **օգտագործել** դրանք խոսքային իրադրություններում և գրելու ժամանակ<br>**- բացահայտել բառիմաստը՝**<br>- զննական միջոցներով (ցուցադրելով առարկա, նկար, գործողություն և այլն),<br>- հոմանիշների կամ հականիշների հիման վրա,<br>- դասագրքի բառացանկի օգնությամբ.<br>**- հասկանալ, կռահել** անծանոթ բարդ բառի նշանակությունը՝<br>- ծանոթ բառակազմական բաղադրիչների հիման վրա,<br>- նախադասության ընդհանուր իմաստի հիման վրա,<br>- մայրենի կամ արդեն իմացած այլ լեզվի հետ նույն հնչողության հիման վրա: | համակարգչի միջոցով<br>- **«Բառ-ոզնի»**<br>▪ **Բազմընտրանքային առաջադրանքներ (Multiple choice)**<br>***Տրված բառակապակցություններում գտնել.***<br>- տեղ կամ ժամանակ ցույց տվող կապակցությունները:<br>▪ **Համակցում (Matching)**<br>▪ **Լրացում.**<br>- նշել նկարներին համապատասխանող բառերը.<br>- նշել նկարներին հականիշ կամ հոմանիշ բառերը:<br>▪ **Դասակարգում**<br>- Տրված բառաշարքը դասակարգել՝ ըստ որոշակի թեմաների (կենդանիներ, հագուստ, սնունդ և այլն)).<br>▪ **Մնջախաղ. գտիր բառը**<br>▪ **Զույգերով, մեծ ու փոքր խմբերով աշխատանք** |
| ***Քերականություն*** | | |
| ***Գոյական (The Noun)*** | | |
| Գոյականի հոգնակի թվի կազմումը *-s* և *-es* վերջավորությունների միջոցով և բացառությունները | - Կարողանալ ճանաչել, կազմել և գործածել գոյականի հոգնակի թվի կազմումը -s և -es վերջավորություններով,<br>*He has a book. He has some English books.*<br>*She has a dress. She has many dresses.*<br><br>- Կարողանալ կազմել և գործածել *man, woman, child, tooth* և *foot* գոյականների հոգնակի | ▪ Նախադասությունների լրացում<br><br>▪ Սխալների ուղղում<br><br>▪ Նշված գոյականների փոխարինումը անձնական դերանուններով<br><br>▪ Համապատասխանեցնել բառերը |

| | | |
|---|---|---|
| | ձևերը,<br><br>- Հասկանալ և կարողանալ խոսքի մեջ գործածել *clothes, scissors, trousers, eye-glasses* գոյականները:<br>*Սա իմ ակնոցն է:*<br>*Սրանք իմ ակնոցներն են:*<br>*These are my eye-glasses..* | նկարներին |
| ***Ածական (The Adjective)*** | | |
| ա)ածականների համեմատության աստիճանների կազմումը *-er*, *-est, more, most* վերջավորությունների և բառերի օգնությամբ,<br><br>բ) *many, much, good, bad* և *little* ածականների համեմատության աստիճանների կազմումը,<br>գ) *as … as, not so .. as* համեմատական կառուցվածքները<br><br>*old և late* ածականները | Կարողանալ ճանաչել, կազմել և գործածել միավանկ և բազմավանկ ածականների համեմատության աստիճանները er, est, more, most վերջավորությունների և բառերի միջոցով,<br>կարողանալալ ճանաչել, կազմել և գործածել *many, much, good, bad, little* ածականների համեմատության աստիճանների անկանոն ձևերը<br>Հասկանալ, կազմել և կարողանալ գործածել as… as, not so … as համեմատական կառուցվածքները<br>*Our classroom is as large as yours.*<br>*Our classroom is not so large as yours.*<br>*My elder brother is 5 years older than I am.*<br>*My close friends are Aram and Hayk. The latter is a student.* | Ավարտել նախադասությունները<br><br>Ով է մեր դասարանի ամենաբարձրահասակը, ամենա…, ամենա…,<br><br>Երկխոսություններ, ուր համեմատվում են անձնական իրերը<br>Երկու նախադասությունների միացում as … as կառույցով<br>Կատարել համեմատություններ թեմային համապատասխան օրինակներով |
| ***Մակբայ (The Adverb)*** | | |
| *Far և a long way, too և also,*<br>*quickly և slowly* | - Կարողանալ far մակբայը գործածել հարցե-րում և ժխտական նախադասություններում իսկ *a long way*-ը հաստատական նախադասու-թյուններում,<br>- Կարողանալ ճիշտ շարադասությամբ գործա- | |

| | | |
|---|---|---|
| | ծել *too* և *also, quickly* և *slowly* մակբայները | |
| ***Դերանուն (The Pronoun)*** | | |
| անձնական, ստացական, ցուցական, հարցական և *some* և *any* անորոշ դերանունները<br><br><br>Ստացական դերանունների բացարձակ ձևերը *mine, yours, his, hers, its, ours, theirs*<br><br><br>*Some, any, every, no* անորոշ դերանուններով կազմված որոշ բարդ ձևեր | Կարողանալ ճանաչել, կազմել և գործածել անձնական, ստացական, ցուցական, հարցական և *some/* any անորոշ դերանունները<br><br><br>- Հասկանալ, կազմել և կարողանալ գործածել ստացական դերանունների բացարձակ ձևերը *mine, yours, his, hers, its, ours, theirs;*<br>*My dictionary is thicker than yours.*<br><br>- Հասկանալ, կազմել և գործածել *something, somebody, somewhere, anybody, anything, anywhere, everybody, everything, everywhere, nobody, nothing, nowhere* ձևերը: | Նայել նկարներին և գրել նախադասություններ *some, any* բառերով<br><br>Թարգմանական վարժանքներ |
| ***Նախդիր (The Preposition)*** | | |
| *About, after, till*<br>*between* – «երկուսի արանքում» իմաստով<br>*Among* – երկուսից ավել իրերի կամ մարդկանց միջև<br>*Before* – «նախքան» իմաստով<br>*Behind* – «ետևում» իմաստով<br>*During* – «ընթացքում» իմաստով<br>*For* – «համար» իմաստով<br>*With* – «հետ» իմաստով | Կարողանալ ճանաչել և գործածել About, after, with, till, behind, between, among, for, during նախդիրները | Համապատասխանեցնել բառերը նկարներին |
| ***Բայ (The verb)*** | | |
| Կանոնավոր և մի շարք անկանոն բայերի անորոշ անցյալ (*The Past Indefinite Tense*) ժամանակը | Ճանաչել, կազմել և կարողանալ գործածել կա-նոնավոր բայերի անցյալ ժամանակը *"ed"* վեր-ջավորությամբ, ինչպես նաև անկանոն բայերի անցյալի ձևերը գրավոր և բանավոր խոսքում՝ *yesterday, last week, two days ago* և նմանատիպ | Նախադասությունների լրացում Բազմընտրական 4 տարբերակներով: |

| | | |
|---|---|---|
| | այլ բառերով ու բառակապակցություններով:<br>*The teacher asked two questions.*<br>*The teacher went out.* | |
| - Անորոշ ապառնի ժամանակ *(The Future Indefinite Tense),* որն արտահայտում է մտադրություն որոշումը կայացնելու ժամանակ:<br><br>**Անորոշ ապառնի** *(The Future Indefinite)* և **Ներկա անորոշ** *(The Present Indefinite)* ժամանակների գործածումը պայմանի երկրորդական նախադասություններում<br><br>**Անցյալ շարունակական** *(The Past Continuous Tense)* ժամանակը, երբ այն ցույց է տալիս մի գործողություն, որն ընթացքի մեջ է անցյալի մի պահի կամ ժամանակահատվածի ընթացքում: | Ճանաչել, կազմել և կարողանալ գործածել Անորոշ ապառնի ժամանակը, երբ այն արտահայտում է մտադրություն որոշումը կայացնելու պահին<br>- *It's hot in this room.*<br>- *I will open the window.*<br>- Հասկանալ, կազմել և կարողանալ գործածել **անորոշ ապառնի և ներկա անորոշ** ժամանակները պայմանի երկրորդական նախադասություններ ունեցող բարդ ստորադասական նախադասություններում:<br>*She will be glad if you go and see her.*<br><br>- Հասկանալ, կազմել և կարողանալ գործածել **անցյալ շարունակական** ժամանակը՝ անցյալի մի պահի կամ ժամանակահատվածի ընթացքում կատարվող գործողություն ցույց տալու նշանակությամբ: | Դերային խաղեր<br>Երկխոսություններ |
| *Can, may, must* մոդալ բայերը ներկա ժամանակում իրենց հիմնական նշանա-կությամբ:<br>Can մոդալ բայի անցյալի ձևը<br>Can և *may* մոդալ բայերը թույլտվության իմաստով | - Կարողանալ ճանաչել և գործածել *can, may,* և *must* մոդալ բայերը իրենց հիմնական նշանա-կությամբ՝ ֆիզիկական և մտավոր կարողու թյուն, թույլտվություն և անհրաժեշտություն:<br>*I can do this exercise.*<br>*May I go out?*<br>*You must do your duties.*<br>- Կարողանալ գործածել *could* ձևը գործողութ-յան կատարման կարողությունը անցյալում | Հաղորդակցական կարողությունները զարգացնող վարժություններ:<br>Նախադասության մեջ ավելորդ բառի ընդգծում: |

| | | |
|---|---|---|
| | արտահայտելու համար.<br>*I could read when I was 7.*<br>- Կարողանալ գործածել can մոդալ բայը թույլ-տվության իմաստով մտերմիկ շրջապատում.<br>*Can I use your mobile phone?* | |
| ***Շարահյուսություն*** | | |
| Հարցական նախադասություններ<br>- Հարցերի տիպերը<br><br>- Պայմանի շաղկապ - *if,*<br>- Խնդրանք արտահայտող նախադասություններ, որոնք ձևով հարցական են՝ գործածելով «*Could you … please?*» ձևը: | Կարողանալ ճանաչել, կազմել և գրավոր ու բա-նավոր խոսքում գործածել հարցական նախադասությունների տարբեր տիպերը (ընհանուր, հատուկ այլընտրանքային և անջատական) Ներկա անորոշ, Անցյալ անորոշ, Ապառնի անորոշ և Ներկա շարունակական ժամանակաձևերով:<br>*Are the girls dancing now?*<br>*What are the girls doing now?*<br>*Are the boys playing football or tennis?*<br>*The boys are playing football now, aren't they?* | Հարցերի և պատասխանների համապատասխանեցում<br>Թեմատիկ հաղորդակցական երկխոսություններ:<br><br>Եկեք պայմանավորվենք |
| **<u>Տեքստերի տիպերը</u>**<br><br>Տեքստեր ունկնդրելու և խոսելու համար<br>▪ կարճ նկարագրություններ<br>▪ կարճ տեղեկատվական տեքստ<br>▪ մանկական երգեր բանաստեղծություններ,<br>▪ կարճ երկխոսություններ<br>▪ ձայնագրություններ և տեսաֆիլմեր | ***Զարգացնել ունկնդրելու և խոսելու հետևյալ կարողությունները***<br><br>ա) Կարողանալ հասկանալ և տալ տեղեկատվություն, երբ հարցնում են անունը, ազգանունը, տարիքը և հասցեն<br>բ) կարողանալ ներկայացնել ինքն իրեն, ընտանիքի անդամներին և ընկերներին, | ▪ Անձի ներկայացում<br>▪ Պատասխանել հարցերին՝ տեքստն ունկնդրելուց հետո<br>▪ Երկխոսություններ<br>▪ Ճանապարհի հարցնելը;<br><br>▪ Դերի կատարում<br>- տեղեկատվության փոխանակում<br>- հանպատրաստից դերերի կատարում |

| | | |
|---|---|---|
| | գ) կարողանալ զրուցել դպրոցի, առօրյայի մասին,<br>դ) կարողանալ զրուցել սիրելի զբաղմունքի մասին,<br>ե) կարողանալ ողջունել և հրաժեշտ տալ օրվա տարբեր ժամերի համար բնորոշ արտահայտություններով,<br>զ) կարողանալ ընդունել առաջարկությունը, օգնությունը, կամ էլ քաղաքավարի կերպով մերժել դրանք | ▪ Կռահել բառը<br>▪ Հեռախոսային խոսակցություն |

| | | |
|---|---|---|
| **Տեքստեր ընթերցելու համար**<br><br>▪ **նկարագրություն**<br><br>▪ **պարզ տեղեկատվություն**<br><br>▪ **հարցազրույց**<br><br>▪ **մանկական երգեր բանաստեղ-ծություններ,**<br><br>▪ **երկխոսություններ**<br><br>▪ **պարզեցված (ադապտացված) հատված-ներ գեղարվեստական երկերից, հեքիաթ-ներից** | **Զարգացնել ընթերցելու հետևյալ կարողությունները.**<br><br>▪ տեքստը կարդալուց հետո կարողանալ որոշել նրա թեման և տեսակը,<br>▪ կարողանալ հասկանալ և կարճ ձևով տալ տեքստի գլխավոր տեղեկատվությունը և գաղափարը,<br>▪ կարողանալ կռահել տեքստում առկա երկու-երեք անծանոթ բառերի իմաստները տեքստի ընդհանուր մտքից: | **Նախաընթերցանական գործունեություն**<br><br>Ընթերցանությունից առաջ ներկայացվում են նոր բառերն ու արտահայտությունները ծանոթ քերականական կառուցվածքներով և դրվում են տեքստն ընթերցելու նպատակնե-րը:<br><br>▪ **Համապատասխանեցում (matching)**<br>▪ **Շարադասում (ordering)**<br>խառնած նախադասությունների, պարբերությունների, նկարների շարադասումը:<br><br>**Հետընթերցանական գործունեություն**<br>Տեքստի բովանդակությանը վերաբերող հարցերին պատասխանելը,<br>Ընթերցած տեքստի վերարտադրում |

| | | |
|---|---|---|
| **Տեքստեր գրելու համար**<br><br>▪ **անձնական թերթիկ**<br><br>▪ **ինքնակենսագրական տեղեկատվություն**<br><br>▪ **առօրյայի նկարագրություն**<br><br>▪ **շնորհավորական բացիկ** | ***Զարգացնել գրելու հետևյալ կարողությունները.***<br><br>▪ կարողանալ լրացնել անձնական քարտ հե-տևյալ կետերով. անուն, ազգանուն, ծննդյան տարեթիվն ու ամիս ամսաթիվը, ծննդյան տեղը, ծնողների անունները, դպրոցը, հայրենի քաղա-քը կամ գյուղը, հասցեն և հեռախոսի համարը,<br>▪ կարողանալ կազմել և գրել փոքրիկ էսսեներ տրված բառերով և բառակապակցություններով,<br>▪ կարողանալ հասկանալ և գրել անձնական կարճ նամակներ, որոնք վերաբերում են առօր-յային, դպրոցին կամ սիրելի զբաղմունքին. | ▪ Նախօրոք պատրաստված անձնական քարտի լրացում դասարանում<br>▪ Դիմումի ձևի լրացում<br>▪ Նամակագրություն անգլախոս երկրներում ապրող հասակակիցների հետ<br>▪ Երկխոսությունների ավարտում<br>▪ Նկարի նկարագրում<br>▪ Ավարտել անավարտ նախադասություննե-րը<br>▪ Ճի՞շտ, թե՞ սխալ |

## 7-րդ դասարան

| Ուսուցանվող նյութ | Ուսուցման/ուսումնառության նպատակները | Ուսումնական գործունեության տեսակները |
|---|---|---|
| ***Թեմաներ***<br>**Մարդկային հարաբերություններ 6 ժամ**<br>- Իմ ծնողները, ընկերները, շրջապատը | **Ձևավորել և զարգացնել հաղորդակցական կարողությունները՝** խոսքային գործունեության բոլոր տեսակներում (ունկնդրել, խոսել, ընթերցել և գրել) տրված թեմաների և հաղորդակցության հետևյալ հիմնական ոլորտների շրջանակներում | |
| **Նախասիրություններ 5 ժամ**<br>- ֆիլմեր և դրանց տեսակները (մուլտֆիլմեր, արկածային, գիտաֆանտաստիկ և այլն)<br>- Համակարգչային խաղեր | **Հաղորդակցության հիմնական ոլորտները**<br>- կենցաղային (առօրյա հաղորդակցական իրադրություններ) | |
| Անցյալը, ներկան և ապագան **5 ժամ**<br>Առօրյա կյանք, դպրոց<br>**Կրկնություն, թեմատիկ գրավոր աշխատանք 4 ժամ** | | |
| **Շփում, հաղորդակցություն 4 ժամ**<br>- Հեռուստատեսություն, հեռախոս, հեռախոսային խոսակցություն | | |
| **Բնապահպանություն. 5 ժամ**<br>- Մեր երկիրը մեր տունն է | | |
| **Հայաստան. 6 ժամ** | | |

| | | |
|---|---|---|
| - Պատմական հուշարձաններ<br>- Իմ բնակավայրը, քաղաքը, գյուղը<br>**Կրկնություն, թեմատիկ գրավոր աշխատանք 4 ժամ** | | |
| **Երկիրը, որի լեզուն սովորում եմ 6 ժամ**<br>- Աշխարհագրական տվյալներ, Նշանավոր դեմքեր. հայտնի գրողներ, երաժշտահաններ | | |
| **Այցելություն բժշկին**<br>առողջություն, դեղատուն **5 ժամ**<br>**Սպորտ** և մարզական խաղեր<br>**Կրկնություն, թեմատիկ գրավոր աշխատանք 4 ժամ** | | |
| **Գնումներ, հագուստ 4 ժամ** | | |
| **Տրանսպորտ**<br>երթևեկության կանոններ **4 ժամ**<br>Ճանապարհորդություն | | |
| **Կրկնություն 6 ժամ**<br>Գեղարվեստական գրականության ադապտացված հատվածներ | | |

| | | |
|---|---|---|
| **Տեքստերի տիպերը**<br>Տեքստեր ունկնդրելու և խոսելու համար կարճ նկարագրություն<br>• կարճ տեղեկատվական տեքստ (հաղորդագրություն)<br>• կարճ պատմվածք (պատմություն)<br>• երգեր, բանաստեղծություններ<br>• կարճ, արարողակարգային երկխոսություն | Զարգացնել ունկնդրելու և խոսելու հետևյալ կարողությունները<br>ա) Հասկանալ լսվող նյութի հիմնական բովանդակությունը և կարողանալ հակիրճ ձևով ասել այն:<br>բ) Լսելով հասկանալ և կարողանալ պատասխանել, երբ խոսքը տան, ընտանիքի, դպրոցի, ընկերների մասին է: | Անձի ներկայացում<br><br>Հարցերի պատասխանում լսելուց հետո<br><br>Երկխոսություններ<br>ա) իրավիճակային վարժանքներ<br>բ) երկխոսությունների լրացում<br><br>Դերի կատարում |

| | | |
|---|---|---|
| • երկխոսություն-հարցում<br>• երկխոսություն-մտքերի փոխանակում<br>• հարցազրույց<br>• պարզեցված (ադապտացված) հատված գեղարվեստական երկերից, հեքիաթներից<br>• ծայնագրություն և տեսաֆիլմ | գ) Լսելով հասկանալ և կարողանալ խոսել, երբ խոսքը սիրելի զբաղմունքի, արծակուրդների, ճանապարհորդության, մուլտֆիլմերի մասին է:<br><br>դ) լսելով հասկանալ և կարողանալ խոսել, երբ խոսքը սպորտի մասին է, տարբերել սպորտը սպորտային խաղերից:<br><br>ե) կարողանալ ներողություն խնդրել և պատասխանել նման խնդրանքին:<br><br>զ) կարողանալ կասկածանք հայտնել:<br><br>է) կարողանալ վստահություն հայտնել: | Խառը տիպի դերակատարում (մնջախաղով և խոսելով )<br><br>Ծանոթ պատմություն<br>Ճանապարհ հարցնելը<br>Կռահել բառը<br>Հեռախոսային խոսակցություն |
| **Տեքստեր ընթերցելու համար**<br>• նկարագրություն<br>• պարզ տեղեկատվություն<br>• հարցազրույց<br>• գովազդ, հայտարարություն<br>• երգեր, բանաստեղծություններ,<br>• ոչ ծավալուն պատմվածքներ<br>• երկխոսություններ<br>• պարզեցված (ադապտացված) հատվածներ գեղարվեստական երկերից, հեքիաթներից<br>էլեկտրոնային տեքստեր (էլեկտրոնային նամակ, վեբ-կայքեր, Home-page և այլն) | **Զարգացնել ընթերցելու հետևյալ կարողությունները**<br><br>Կարդալ և հասկանալ 7-րդ դասարանի քերականական կառուցվածքներով և ծանոթ թեմաներով գրված տեքստերի ընդհանուր բովանդակությունը:<br><br>Կարդալ և տեքստից հանել անհրաժեշտ տեղեկատվությունը:<br><br>Կարդալ և հասկանալ տրամաբանական կապ ունեցող երկխոսություններ, կարճ հեքիաթներ, անձնական համառոտ նամակ-ներ:<br><br>Կարդալ և հասկանալ համակարգչային Microsoft word | **Նախաընթերցանական գործունեություն**<br>Ընթերցանությունից առաջ ներկայացվում են նոր բառերն ու արտահայտությունները ծանոթ քերականական կառուցվածքներով և դրվում են տեքստն ընթերցելու նպատակները:<br>1.Հարցաշար<br>ա) բազմընտրական<br>բ) ճիշտ/սխալ<br>2. համապատասխանեցում (matching)<br>**Հետընթերցանական գործունեություն**<br>Տեքստի բովանդակությանը վերաբերող հարցերին պատասխանելը: |

| | | |
|---|---|---|
| | ծրագրի առավել կարևոր հրահանգները:<br><br>Կարդալ և հասկանալ շնորհավորանքներ և բարեմաղթանքներ:<br><br>Բառարանի օգնությամբ կարդալ և հասկանալ միջազգայնորեն ընդունված տարրական (elementary) մակարդակով գրված գեղարվեստական գրականությունից հատվածներ: | |
